ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

# ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնակատար
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ

*ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքը կազմակերպվել է 1977 թ., երբ հասարակական գիտությունների բաժանմունքը տրոհվեց երկու՝ պատմության ու տնտեսագիտության և փիլիսոփայության ու բանասիրության բաժանմունքների։ Փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի կազմում գործում են փիլիսոփայության ու իրավունքի, Հր. Աճառյանի անվան լեզվի, Մ. Աբեղյանի անվան գրականության, արվեստի ինստիտուտները, ինչպես նաև փիլիսոփայության և օտար լեզուների ամբիոնները։ Բաժանմունքին կից են նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Սովետական Միությունն փիլիսոփայական ընկերության և Սովետական Միության հոգեբանական ընկերության հայկական բաժանմունքները։ Բաժանմունքին առընթեր ստեղծվել են փիլիսոփայության, իրավագիտության, լեզվաբանության, գրականության, արվեստի կոորդինացիոն խորհուրդները, «Դավիթ Անհաղթի տեսական ժառանգության և միջնադարյան Հայաստանի փիլիսոփայության», «Բարոյագիտության պրոբլեմների» գիտական խորհուրդները, հայկական տառատեսակների հանձնաժողովը։ Ժառանգելով հասարակական գիտությունների բաժանմունքի գրական փորձը, փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքը իր գոյության չորս տարիների ընթացքում զգալի աշխատանք է ծավալել փիլիսոփայության, իրավագիտության, լեզվաբանության, գրականագիտության, արվեստաբանության բնագավառներում։ Համառոտակի ներկայացնենք բաժանմունքի ինստիտուտների այդ տարիների հիմնական նվաճումները։*

*Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում Սովետական Հայաստանի նյութերի հիման վրա անցկացված է սոցիալիստական ապրելակերպի կոմպլեքսային սոցիոլոգիական հետազոտություն։ Զարգացած սոցիալիզմի պայմաններում պետության կառավարման և իրավունքի զարգացման օրինաչափությունների պրոբլեմի ուղղությամբ ուսումնասիրված է Հայկական ՍՍՀ-ում պետական շինարարության հարցերի մի խումբ՝ հանրապետության նոր սահմանադրության առաջադրած խնդիրների ու հեռանկարների լույսի ներքո։ Ինստիտուտը հրատարակել է մի շարք աշխատություններ՝ «Ժամանակակից բնագիտության փիլիսոփայական հարցերը», «Պատմական իմացության մեջ համեմատական հետազոտությունների մեթոդաբանական պրոբլեմները», «ԳՏՀ-ն և սոցիալիստական հասարակության զարգացումը», երկհատորյա «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն», «Սոցիալական*

շահեր և սոցիալիստական իրավունք», «Սոցիալիզմը և մարդու իրավունքները» ժողովածուներն ու մենագրությունները և այլն։

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը զգալի հաջողությունների է հասել հայոց լեզվի կառուցվածքի ու գործառության, հայերենի հասարակական և տարածական տարբերակների հետազոտության ու նկարագրության, նրա պատմական զարգացման օրինաչափությունների բացահայտման ուղղությամբ։ Ստացված են հայոց լեզվի հանրալեզվաբանական ու հոգեբանական ուսումնասիրության առաջին արդյունքները։ Լույս են տեսել այնպիսի կարևոր աշխատանքներ, ինչպիսիք են «Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական քերականության երեք հատորները, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» չորս հատորները, հայ մի շարք դասական հեղինակների համաբարբառները։ Նշանակալից է «Հայոց լեզվի համեմատական քերականություն» հիմնարար աշխատության ստեղծումը, որտեղ գիտական հստակությամբ որոշարկված է հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզուների շարքում։

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ուշադրության կենտրոնում եղել է ինչպես արդի գրական պրոցեսի հետ կապված բազմաթիվ պրոբլեմների, այնպես էլ հայ գրականության անցած բազմագարյա ճանապարհի գիտական ուսումնասիրությունը։ Լույս են տեսել մի շարք կարևոր աշխատանքներ, այդ թվում «Անհատի կոնցեպցիան զարգացած սոցիալիզմի գրականության մեջ», «Սովետահայ գրականության պոետիկան», «Գրականությունը և ժամանակը», «Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին» կոլեկտիվ ժողովածուները։ 1979-ին Հայկական ՍՍՀ պետական մրցանակ է շնորհվել բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Բ. Աղաբաբյանին՝ «Եղիշե Չարենց» երկհատոր մենագրության համար։ Ինստիտուտի ակնառու հաջողություններից է «Հայ նոր գրականության պատմություն» հիմնարար հինգհատորյակի հրատարակության ավարտը։ Այդ աշխատության համար 1980 թ. Հայկական ՍՍՀ պետական մրցանակ են ստացել ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Էդ. Ջրբաշյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Ս. Ն. Սարինյանը, Ա. Մ. Ինճիկյանը (ետմահու), Ս. Ա. Մանուկյանը, արվեստագիտության դոկտոր Գ. Խ. Ստեփանյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Լ. Ա. Ասմարյանը, Ռ. Պ. Նանումյանը, Ս. Ա. Շտիկյանը։ Ինստիտուտի կարևորագույն աշխատանքներից հարկ է նշել հայ նշանավոր երգիծաբան Հ. Պարոնյանի «Երկերի» 10-հատորյակի հրատարակության ավարտը և միջնադարի մեծ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի գիտական-քննական բնագրի պատրաստումը։ Ինստիտուտում համակողմանիորեն ուսումնասիրվում է սփյուռքահայ գրականությունը։

Արվեստի ինստիտուտում զգալի աշխատանքներ են տարվել միջնադարեայ և նոր ժամանակների հայ ճարտարապետության զարգացման կարևորագույն փուլերի և ազգային առանձնահատկությունների, սովետահայ ճարտարապետության կազմավորման առավել նշանակալից գործընթացների ու ոճական հիմնական ուղղությունների բացահայտման գործում։ Ինստիտուտն ավարտել է «Հայ ճարտարապետության հուշարձաններ» 10-հատորանոց շարքը՝ հայերեն, անգլերեն, իտալերեն լեզուներով, որն իրագործվել է Միլանի պոլիտեխնիկումի հայ ճարտարապետության խմբի հետ համատեղ։ Ինստիտուտի հրատարակած գրքերից հիշատակենք «Հին և միջնադարյան Հայաստանի ճարտարապետության ակնարկներ», «Հայ կիրառական արվեստի պատմու-

թյան ակնարկեր», «Սովետական Հայաստանի արվեստը 60 տարում», «Հայ թատրոնի պատմություն. 1901—1920 թթ.», «XIX—XX դարերի հայ թատրոնի տարեգրություն» աշխատանքները։ Ինստիտուտի կատարած գործերում ուրույն տեղ ունի Շեքսպիրի երկերի 10-հատորյակի հայերեն հրատարակության պատրաստումը։

Բաժանմունքի և նրա ինստիտուտների կողմից անցկացված միջոցառումներից առանձնապես նշելի են ՍՄԿԿ XXV համագումարի որոշումներին և ՍՍՀՄ նոր սահմանադրությանը, Վ. Ի. Լենինի ծննդյան 110-ամյակին, Ստ. Շահումյանի ծննդյան 100-ամյակին, Մ. Նալբանդյանի ծննդյան 150-ամյակին, Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջանները, հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումը, Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ համատեղ կազմակերպած «Անհատի կոնցեպցիան զարգացած սոցիալիզմի շրջանի գրականության մեջ» համամիութենական կոնֆերանսը և այլն։ 1980 թ. հանրապետության տարբեր շրջաններում տեղի ունեցան գիտական արտագնաց նստաշրջաններ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմկուսի կազմավորման 60-ամյակին։ Այդ միջոցառումներից մի քանիսը, ինչպես նաև այլ միջոցառումներ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքը իրականացրել է պատմության և տնտեսագիտության բաժանմունքի հետ համատեղ։ Գիտատեսական ու կազմակերպական բարձր մակարդակով նշվեց հայ ականավոր մտածողներից մեկի՝ փիլիսոփա-տրամաբան Դավիթ Անհաղթի 1500-ամյա հոբելյանը։

Հանգամանորեն կանգ առնենք բաժանմունքի 1980 թ. կատարած աշխատանքների վրա, քանի որ այդ տարեթիվը խորհրդանշում է և՛ նախորդ հնգամյակի ավարտը, և՛, միևնույն ժամանակ, ութսունական թվականների սկիզբը։

Մեր փիլիսոփաները զգալի աշխատանք են կատարել այն սոցիալական և սոցիալ-հոգեբանական գործոնների վերլուծության բնագավառում, որոնք որոշում են սովետական մարդկանց աշխատանքային վարքագիծը և պայմանավորում արտադրական ոլորտում նրանց արժեքային կողմնորոշումների իրականացման բնույթն ու աստիճանը։ Հետազոտության արդյունքներն ամփոփված են «Ապրելակերպը և անհատի աշխատանքային գործունեությունը» հոդվածների ժողովածուում։ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը ձեռնարկել է նաև կոմունիստական կացութաձևի կազմավորման և զարգացման մեջ տնտեսական, սոցիալական և հոգևոր գործոնների դիալեկտիկական փոխներգործության թեմայի մշակումը։ Ինստիտուտը զբաղվել է զարգացած սոցիալիզմի պայմաններում հասարակական հարաբերությունների հետ հասարակության արտադրողական ուժերի ուղղակի և հակադարձ կապը ապահովող մեխանիզմների փիլիսոփայական-մեթոդաբանական վերլուծությամբ։ Նախնական արդյունքները ամփոփված են «Հայկական ՍՍՀ ժողտնտեսության 1981—1985 թթ. և մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանի զարգացման հիմնական ուղղությունները» նախագծի սոցիալ-տնտեսական ասպեկտները» զեկուցագրում և հրատարակված մի շարք հոդվածներում։ Ինստիտուտն ավարտել է սոցիալիստական հասարակության պայմաններում սոցիալական շահերի իրավական արտահայտության և գիտատեխնիկական առաջադիմության խթանման իրավական միջոցների պրոբլեմների հետազոտու-

թյունը։ Արդյունքներն ամփոփված են «Շահերի արտահայտման մեխանիզմը սոցիալիստական իրավունքում» մենագրության մեջ։

Հայ փիլիսոփայական մտքի պատմության ուղղությամբ առանձին ուշադրություն է դարձվել քիչ ուսումնասիրված հեղինակներին։ Հետազոտության նախնական արդյունքները ամփոփված են «Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական դպրոցների պատմության շուրջը» մենագրությունում և մի շարք հոդվածներում։

Մշակույթի տեսական պրոբլեմների գծով տրված է մշակութային ավանդույթի ֆենոմենի բազմակողմանի բնութագիրը, ուրվագծված են նրա ուսումնասիրության հիմնական խնդիրներն ու նպատակները։ Մասնավորապես բնութագրված են մշակութային ավանդույթի կոմունիկատիվ և կարգավորիչ տեսանկյունները։ Արդյունքներն ամփոփված են «Մշակույթի փիլիսոփայական պրոբլեմներ» հոդվածների ժողովածուում, որը հրատարակվել է Թբիլիսիում, 1980 թ.։

ԳՏՀ-ի սոցիալական պրոբլեմների գծով հետազոտված են զարգացած սոցիալիզմի հասարակության պայմաններում էկոլոգիական պրոբլեմների առաջացման և լուծման պրոցեսների վրա գիտատեխնիկական հեղափոխության թողած ազդեցության որոշ տեսանկյուններ։ Բացահայտված է քաղաքական գործոնի դերը էկոլոգիական ճգնաժամային երևույթների հաղթահարման գործում։ Հետազոտված են կոմունիստական տիպի մարդու ձևավորման վրա ԳՏՀ-ի ներգործության հարցերը, բացահայտված են հասուն սոցիալիզմի պայմաններում աշխատանքի սուբյեկտիվ արժեքի մեծացումը և անհատի առաջին կենսական պահանջմունքը դառնալու պրոցեսը պայմանավորող նյութատեխնոլոգիական և սոցիալական գործոնները։ Հետազոտության արդյունքները ամփոփված են «Էկոլոգիան և քաղաքականությունը», «Աշխատանքը՝ առաջին կենսական պահանջմունք» մենագրություններում և մի շարք գիտական հոդվածներում ու զեկուցումներում։ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում մի շարք հետազոտություններ են կատարվել գեղագիտության պրոբլեմների, ինչպես նաև բուրժուական փիլիսոփայության քննադատության բնագավառում։

Ընդարձակ են եղել մեր լեզվաբանների հետազոտությունների շրջանակները, որոնցից առաջին հերթին նշանակալից են հայոց լեզվի պրոբլեմներին նվիրված աշխատանքները։ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ավարտվել է «Ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի տիպաբանական ակնարկներ» պրոբլեմի հետազոտությունը։ Կատարված է բայերի դասդասումը տարբեր բառիմաստային խմբերի, յուրաքանչյուր խմբի համար սահմանված է իրացվող շարահյուսական մակարդակում կանոնավոր կերպով իմաստային արժույթների ամբողջությունը։ Տրված է հայերենի եղանակի, ժամանակի, դեմքի և թվի կարգերի տիպաբանական բնութագիրը, իմաստային անփոփոխակների հիման վրա որոշված են հայերենի և ռուսերենի անվանական խմբերի շարահյուսական փոփոխականները՝ յուրաքանչյուր լեզվին բնորոշ կառույցների հայտնաբերման նպատակով։

Լեզվական համակարգերի հետազոտության գծով ավարտվել է «Ժամանակակից հայերենի նախադասության քերականական կարգերը» թեման։ Քննված են նախադասության իմաստաբանության հարցերը, քերականական և տրամաբանական կարգերի փոխհարաբերությունը, նախադասության իմաստային

և կառուցվածքային առանձնահատկությունները։ Ավարտվել է նաև «Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն» թեման։ Փորձառական ուսումնասիրության հիման վրա նկարագրվում են հայերենի հնչյունական և հնչույթային համակարգերը, շեշտաբանությունը՝ տրամաբանական և զգացական շեշտերի փոխհարաբերության հաշվառմամբ, նախադասությունների տարբեր հաղորդակցական տիպերի հնչերանգը։ Ինստիտուտում որոշակի աշխատանք է կատարվել մամուլի և հրապարակախոսության լեզուն, հոմանիշների ոճական կիրառությունը, գիտության լեզվի բառապաշարը պրոբլեմների հետազոտության ուղղությամբ։ Բարբառագիտական ատլասի կազմման նպատակով ինստիտուտի լեզվաբանները ուսումնասիրել են 46 բնակավայրերից հավաքված զուգաբանությունները, որոնք բաշխվում են Հայկական ՍՍՀ, Արևմտյան Հայաստանի, Ադրբեջանական և Վրացական ՍՍՀ տարածքների վրա։ Խմբագրման է պատրաստվել «Հայերենի թեմատիկ բառարանը»։ Ավարտվել է «Ժամանակակից հայոց լեզվի պարզ նախադասության կառուցվածքի ուսումնասիրությունը» թեման։ Տրված է բայական բառակապակցությունների կառուցվածքային առանձնահատկությունների քննությունը՝ ըստ նախադասության անդամների և անմիջական բաղադրիչների քերականության կաղապարների։

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատակիցները հետազոտել են գեղարվեստական մեթոդի և պոետիկայի պրոբլեմները։ Նրանք ուսումնասիրել են հայ գրականության էպիկական ժանրերի մեջ ռեալիզմի ձևավորման և զարգացման հարցերը, գեղարվեստական կերպարի կառուցվածքը, պատմավեպի ժանրի տեսական պրոբլեմները, գրական ժանրը և սյուժեի կառուցման սկզբունքները։ Մեր գրականագետները լուսաբանել են անցյալի գրական ժառանգության նկատմամբ հայ մարքսիստական քննադատության ցուցաբերած վերաբերմունքը, քննության նյութ են դարձրել մարքսիստական քննադատության մեջ պրոլետարական գրականության առաջացման և զարգացման հարցերը։

Ինստիտուտում շարունակվում են «Սովետահայ գրականության պատմության» պատրաստման աշխատանքները։ Քննարկման է ներկայացված «Սովետահայ պոեզիայի պատմության» առաջին հատորը։ Աշխատությունը ընդգրկում է սովետահայ պոեզիայի ձևավորման և սոցիալիստական ռեալիզմի հաստատման առաջին քսանամյակը։ Հետազոտվել են պոեզիայի զարգացման օրինաչափությունները, զարգացման նոր միտումները, ավանդույթների և նորարարության հարաբերակցությունը։

ՍՍՀՄ ժողովուրդների գրականության նախահոկտեմբերյան շրջանի պատմության ուսումնասիրության ասպարեզում կազմված է «Հայ նոր գրականության ժամանակագրության» երկրորդ հատորը։ Հրատարակության են պատրաստվել ուշ միջնադարյան (XVI—XVII դդ.) բանաստեղծությունների բնագրերը, «Աղեքսանդրի պատմությունը», «Հովհաննես Թումանյան։ Ուսումնասիրություններ և հրապարակումներ» գրքի 3-րդ հատորը։ Գրական կապերի գծով ավարտվել են «Ժամանակակից հայ արձակի որոնումներն ու բազմազգ սովետական գրականությունը» և «Հայ-վրացական գրական կապեր» աշխատությունները։ Ընթացիկ տարում հետազոտվել է 1950—55 թթ. սփյուռքահայ գրականության պատմությունը, կազմվել է 1941—50 թթ. այդ գրականության մատենագիտությունը։

ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում ավարտված է «Հայ ճարտարապետության պատմության» 4-րդ հատորի տեքստի շարադրանքը, որն ընդգրկում է IX—XIX դդ. ժամանակաշրջանը։ Ավարտված է «Սովետական Հայաստանի երաժշտությունը ժամանակակից փուլում (1967—77 թթ.)» ենթաթեման, որը նախատեսված է Մոսկվայում հրատարակվող «ՍՍՀՄ ժողովուրդների երաժշտության պատմություն» բազմահատորյակի համար։ «Սփյուռքահայ թատրոնի պատմություն» թեմայից հրատարակության է հանձնված «Հայ թատրոնը Ֆրանսիայում» գրքի առաջին հատորը։ Ավարտված են «Հայ թատրոնի պատմության ակնարկներ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», «Ռուսական մամուլը հայկական կինոյի մասին», «Էկրանավորումը հայկական կինոյում» և այլ աշխատանքներ։

Ինստիտուտում ուսումնասիրվել են Սովետական Հայաստանի կերպարվեստի զարգացման սկզբնական շրջանի գեղարվեստական և ոճական տարբեր ուղղությունների ձևավորման և զարգացման երևույթները, ինչպես նաև ազգային քանդակագործության գեղարվեստական առանձնահատկությունները։ Հետազոտության արդյունքները ընդգրկված են «Սովետական Հայաստանի կերպարվեստը» (20—30-ական թթ.) և «Հայկական սովետական քանդակագործության պրոբլեմները» աշխատություններում։

Հրատարակության է պատրաստված Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանության լիակատար ժողովածուի վերջին՝ 10-րդ հատորը, որն ընդգրկում է Նրա բանաստեղծական գործերը։ Սրանով ավարտվում է Շեքսպիրի երկերի՝ առաջին անգամ լիակատար հայերեն ժողովածուի հրատարակման նախապատրաստման աշխատանքը։

1980 թ. փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ինստիտուտների մակնիշով լույս է տեսել 46 անուն գիրք։

Հիրավի զգալի է բաժանմունքի անցյալ տարիների կատարած աշխատանքը, սակայն է՛լ ավելի մեծ է և է՛լ ավելի կարևոր այն աշխատանքը, որ պետք է կատարվի առաջիկա՝ տասնմեկերորդ հնգամյակում։ Այդ աշխատանքների բովանդակությունը և բնույթը սահմանելիս բաժանմունքի բյուրոն ամբողջությամբ ելել է Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI և Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարների որոշումների ոգուց։ Համակողմանիորեն քննարկելով բաժանմունքի խնդիրները նշված համագումարների լույսի ներքո, բաժանմունքի բյուրոն վերանայել է ինստիտուտների 1981—85 թթ. գիտահետազոտական աշխատանքների պլանները՝ ելակետ ընդունելով այդ պլանների համապատասխանությունը ՍՍՀՄ տնտեսական և սոցիալական զարգացման տասնմեկերորդ հնգամյակի հիմնական ուղղություններին։ Ի դեպ, դեռևս 1979 թ. մարտին բաժանմունքի բյուրոյի որոշմամբ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի կազմում ստեղծվել է պրոբլեմային գիտական խումբ Հայկական ՍՍՀ տնտեսական-սոցիալական զարգացման սոցիալական պրոբլեմները հետազոտելու նպատակով։ Խմբի առջև որպես կարևորագույն խնդիր է դրվել այնպիսի հանձնարարականների մշակումը, որոնք օգնեին հանրապետության պլանավորող օրգաններին հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման պլանները մշակելիս։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարի որոշումներից և համապատասխան փաստաթղթերից ելնելով բաժանմունքի ինստիտուտները վերանայել են իրենց գիտահետազոտական պլան-

ները և առաջիկա հնգամյակի գործունեության ծրագիրը։ Համագումարը մեր հասարակագետների առջև որոշակի խնդիր է դրել՝ իմաստավորել կյանքի նոր պրոբլեմները։ Այդ խնդիրն իրագործելու նպատակով բաժանմունքի բյուրոն հաստատել է ինստիտուտների մի շարք նոր թեմաներ, այդ թվում՝ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գծով՝ «Հասուն սոցիալիզմի հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացման միտումները (Հայկական ՍՍՀ նյութերի հիման վրա)», «Սոցիալիստական ապրելակերպի կատարելագործումը և նոր մարդը», «Կուլտուրական հեղափոխությունը իբրև սոցիալիզմի կառուցման օրինաչափություն (Հայկական ՍՍՀ նյութերի հիման վրա)» և այլն։ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտին հանձնարարված է առաջիկա տարիներին գիտահետազոտական պլաններում արտացոլել ժամանակակից հայ գրականության և գրականության տեսության այն նոր հարցերը, որոնք բխում են Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարի փաստաթղթերում տեղ գտած գիտական պրոբլեմատիկայի խնդիրներից։ Բաժանմունքի բյուրոյի որոշմամբ արվեստի ինստիտուտի 1982—83 թթ. գիտահետազոտական աշխատանքների պլաններում նախատեսված է «Սովետահայ արվեստը զարգացման ժամանակակից փուլում» ժողովածուն, որը պետք է համակողմանիորեն արձագանքի Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI և Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարների առաջադրած դաղափարադաստիարակչական խնդիրներին։

Փիլիսոփայության բնագավառում ընդհանուր տեսական հարցերին զուգընթաց (որոնց մասին արդեն հիշատակվեց) 1980-ական թթ. է՛լ ավելի ուշադրություն կդարձվի հայ փիլիսոփայության պատմության հետազոտությանը։ Արդյունքները կամփոփվեն «Հայ փիլիսոփայության պատմություն» բազմահատորյակում։ Այդպիսի աշխատության ստեղծման նախադրյալները առկա են։ Հայ փիլիսոփայության պատմությունը, որը հայագիտության ամենաերիտասարդ բնագավառներից է, վերջին տարիներին զգալի վերելք է ապրել։ Լույս են տեսել մի շարք հետազոտություններ, այդ թվում Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, հանգուցյալ երախտաշատ Վ. Կ. Զալոյանի «Հայոց փիլիսոփայության պատմությունը», որի համար հեղինակին շնորհվել է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ։ Հայ փիլիսոփայության ասպարեզում կատարած կարևոր հետազոտությունների համար ՀՍՍՀ պետական մրցանակի է արժանացել փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ս. Արևշատյանը։

Հայ փիլիսոփայության գիտական հետազոտության համար նոր խթան կծառայի Դավիթ Անհաղթի 1500-ամյա հոբելյանը, որը ոչ միայն մեծ շուքով նշվեց Երևանում, Մոսկվայում, Թբիլիսիում, այլ նաև արտասահմանյան մի շարք երկրներում, այդ թվում Հունաստանում, Բուլղարիայում, Ֆրանսիայում և այլուր։ Նշանավոր տարեդարձի առթիվ հրատարակված մենագրություններում, ժողովածուներում, ՀՍՍՀ ԳԱ գիտական նստաշրջանում, Մոսկվայում կարդացված զեկուցումներում վեր հանվեց Դավիթ Անհաղթի կարևոր դերը հայ և համաշխարհային փիլիսոփայական ու տրամաբանական մտքի պատմության մեջ։ Հայաստանի կոմկուսի XXVII համագումարում Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանի զեկուցման մեջ, ՀՍՍՀ ԳԱ

պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի ելույթում, ի թիվս այլ նշանավոր հոբելյանների, ըստ արժանվույն գնահատվեց Դավիթ Անհաղթի 1500-ամյակի տոնակատարության անցկացումը։ «Вопросы философии» մոսկովյան հանդեսի 1980 թ. № 11-ում լույս տեսած ընկ. Կ. Ս. Դեմիրճյանի «Սոցիալական առաջընթացի ուղիներում» հոդվածում ասված է. «Ոչ միայն հայ, այլև ամբողջ սովետական ժողովրդի մշակույթի ու գիտության աչքի ընկնող իրադարձությունը հանդիսացան հայ մեծ փիլիսոփա, գիտնական ու վաղ միջնադարի հումանիստ Դավիթ Անհաղթի 1500-ամյակին նվիրված տեսական դիտաժողովները, սիմպոզիումները, հասարակայնության հանդիսավոր ժողովները Մոսկվայում, Երևանում, Թբիլիսիում և երկրի այլ քաղաքներում» (էջ 11—12)։ Ամփոփելով Դավիթ Անհաղթի 1500-ամյա հոբելյանի հետ առնչվող միջոցառումները, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը նպատակահարմար համարեց ակադեմիայի փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքին կից ստեղծել «Դավիթ Անհաղթի և միջնադարյան Հայաստանի փիլիսոփայության» գիտական խորհուրդ, որի հիմնական խնդիրները համարեց Դավիթ Անհաղթի տեսական ժառանգության և միջնադարյան Հայաստանի փիլիսոփայության վերաբերյալ հետազոտությունների կոորդինացումը, այդ հետազոտությունները բարելավելու նպատակով հանձնարարականների մշակումը, հետազոտության արդյունքները հրատարակման հանձնարարելը և այլն։

Այժմ հայ փիլիսոփայական մտքի պատմության հետազոտության բնագավառում սկսվում է մի նոր փուլ։ Մինչև հիմա մեր ժողովրդի փիլիսոփայական մտքի անցյալին վերաբերող հետազոտությունները մեծ մասամբ ընդհանուր բնույթի էին, ամեն մի գործ բնութագրում էր անցյալի հեղինակի փիլիսոփայությունն ընդհանրապես, այս կամ այն ժամանակահատվածի փիլիսոփայական միտքն ընդհանրապես։ Հայ փիլիսոփայական մտքի հետազոտության այդ ժամանակաշրջանը պայմանականորեն կարելի է անվանել էքստենսիվ հետազոտության փուլ։ Այժմ անհրաժեշտ է անցնել ինտենսիվ հետազոտության փուլին։ Ժամանակը հասունացել է, որպեսզի անցյալի փիլիսոփաների տեսական ժառանգությունը վերլուծվի մասնագիտական առումով՝ մեկնաբանման նյութ դարձվեն ոչ միայն նրանց փիլիսոփայական հայացքներն ընդհանրապես, այլև նրանց ուսմունքը փիլիսոփայական տարբեր բնագավառների՝ իմացաբանության, տրամաբանության, բարոյագիտության, գեղագիտության, սոցիոլոգիայի և այլ տեսանկյուններից։ Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ հետազոտողը կանգնած լինի ժամանակակից փիլիսոփայական գիտության և, մասնավորապես, այդ գիտության համապատասխան բնագավառի տեսության այսօրվա նվաճումների մակարդակի վրա։ Միայն նման մոտեցման դեպքում հնարավոր կլինի, իհարկե կոլեկտիվ ուժերով, ստեղծել հայ փիլիսոփայական մտքի գիտական բազմահատոր պատմությունը։ Դա մեր փիլիսոփաների սլատվավոր խնդիրն է, քանի որ միայն այդ կերպ կարելի է ցույց տալ անցյալի հայ փիլիսոփաների իրական տեղն ու դերը համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմության մեջ։

Նկատի ունենալով մարքսիստական բարոյագիտության կարևոր նշանակությունը ինչպես գիտությունների զարգացման համակարգում, այնպես էլ կոմունիստական շինարարության խնդիրների լուծման ուղղությամբ աշխատավորների ստեղծագործական ակտիվության ու դերի հետագա զարգացման գործում և ելնելով Սովետական Միության կոմունիստական կուսակցության

XXVI և Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարների կողմից առաջադրած խնդիրների իրականացման պահանջներից, ՀՍՍՀ ԳԱ համակարգում՝ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքին կից ստեղծված է «Բարոյագիտության պրոբլեմների գիտական խորհուրդ»։ Քանի որ բարոյագիտությունը՝ որպես հիմնարար գիտություն մինչև հիմա տեղ չի գտել մեր ակադեմիայի գիտական հիմնարկների համակարգում, ուստի նորաստեղծ խորհուրդը (նախագահ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Խ. Քալաշյան) լուրջ անելիքներ ունի այդ բնագավառի բացը լրացնելու գործում։ Ահա թե ինչու խորհրդի գլխավոր խնդիրը ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը համարում է բարոյագիտության բնագավառում գիտական հետազոտությունների կոորդինացումը հանրապետությունում, գիտական հետազոտությունների հեռանկարային ծրագրերի մշակումը, հանրապետության բուհերում բարոյագիտության դասավանդման գիտամեթոդական հանձնարարականների մշակումը, աշխատավորության շրջաններում բարոյագիտության հրատապ պրոբլեմների վերաբերյալ հանրամատչելի զեկուցումների թեմատիկայի մշակումը և զեկուցումների կազմակերպումը Սովետական Միության փիլիսոփայական ընկերության հայկական բաժանմունքի և հանրապետական «Գիտելիք» ընկերության հետ համատեղ։

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի իրավագետ-գիտնականները վերջին տարիներին հրատարակել են մի շարք աշխատանքներ, ներկայացրել են հանձնարարականներ համապատասխան իրավագիտական մարմիններին։ Այժմ կարևոր է մշտական ուշադրություն դարձնել իրավագիտական նոր պրոբլեմատիկայի մշակմանը, այդ բնագավառում հետազոտությունների արմատական բարելավմանը, իրավաբանական գիտության և կյանքի է՛լ ավելի սերտ կապի ամրապնդմանը։

Մեր ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների համակարգում մինչև վերջերս տեղ չէր գտել գիտության այնպիսի կարևորագույն բնագավառ, ինչպիսին է հոգեբանությունը։ Մինչդեռ գնալով ավելի մեծանում է հոգեբանական գիտությունների տեսակարար կշիռը գիտությունների համակարգում։ Այժմ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում ստեղծվել է հոգեբանության բաժին։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել գիտության նոր ուղղությունների զարգացմանը, բաժնի առջև խնդիր է գրված հետազոտել գիտական ստեղծագործության հոգեբանության և սոցիալական փոքր խմբերի հոգեբանության հրատապ պրոբլեմները։

Այդ ուղղություններին զուգընթաց փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը 1980-ական թթ. կշարունակի հետազոտել մի շարք այլ պրոբլեմներ։ Գիտական գիտելիքի մեթոդաբանության և տրամաբանության հարցերը ինստիտուտի մշտական ուսումնասիրության նյութերից են։ Ստացված արդյունքները հայտնի են միութենական ընթերցողին։ Առաջիկա տարիներին ևս ինստիտուտում կզբաղվեն այդ պրոբլեմի հետազոտմամբ, քննարկելով մասնավորապես այնպիսի հարցեր, ինչպիսիք են գիտական գիտելիքի վերլուծության ձևական մեթոդների սահմանները ու հնարավորությունները, փիլիսոփայական փաստարկման էվրիստիկ ֆունկցիաները և յուրահատկությունը, գիտական գիտելիքի արժեքային ասպեկտները, գիտության մեջ պրոբլեմային իրադրությունների մոդելները։

Ինստիտուտում կշարունակվեն հետազոտությունները ժամանակակից բնագիտության փիլիսոփայության հարցերի բնագավառում։ Ծրագրված է քննարկել աստղաֆիզիկայի և մաթեմատիկայի մեթոդաբանական հարցերը, ժամանակակից կոսմոլոգիական և կոսմոգոնիական մոդելների վերլուծությունը աստղաֆիզիկական գիտարկումների պրակտիկայով դրանց էմպիրիկ հիմնավորվածության պարզաբանման տեսանկյունից, աստղագիտական գիտելիքի պատմական զարգացման մեթոդաբանական խնդիրները, մաթեմատիկական օբյեկտների գոյաբանական ստատուսի պրոբլեմները։ Մեր կարծիքով անհրաժեշտ է էլ ավելի ուշադրություն դարձնել բնագիտության փիլիսոփայական հարցերի հետազոտությանը, քանի որ մեր հանրապետության գիտնականների և հատկապես ֆիզիկոսների ու մաթեմատիկոսների հանրահայտ նվաճումները հնարավորություն են ընձեռում փիլիսոփաներին՝ ցույց տալ այդ նվաճումների մեթոդաբանական նշանակությունը։

Տասնմեկերորդ հնգամյակում Հայաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփաները հանրապետության բուհերի փիլիսոփայական ամբիոնների գիտնականների հետ համատեղ կմշակեն հասարակական գիտությունների մեթոդաբանական և գիտության սոցիոլոգիական պրոբլեմները։ Առաջին հարցի առնչությամբ քննարկման նյութ կդառնան սոցիալական իմացության յուրահատկությունը, սոցիալական տեսության օբյեկտիվ-ճանաչողական և արժեքային-կողմնորոշիչ ֆունկցիաների փոխհարաբերությունը, հասարակության համակարգային վերլուծության մեթոդաբանական պրոբլեմները, պատմական տիպաբանության տեսանկյունները. երկրորդ հարցի առնչությամբ՝ ժամանակակից հասարակությունում գիտության դերի որակական աճի սոցիալ-տնտեսական նախադրյալները, գիտության հումանիստական էությունը և գիտնականի բարոյական պատասխանատվությունը, հասարակության գիտական կառավարման պրոբլեմները։ Սոցիալիստական հասարակության հետագա զարգացման մեթոդաբանական խնդիրներից այնպիսի հարցեր, ինչպիսիք են արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների փոխներգործության դիալեկտիկան սոցիալիստական հասարակության արդի փուլում, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հարաբերակցությունը զարգացած սոցիալիստական հասարակության գիտական կառավարման մեջ՝ նույնպես կհետազոտեն մեր փիլիսոփաները առաջիկա տարիներին։

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներում ուրույն տեղ է գրավում գիտատեխնիկական հեղափոխության հետ առնչվող հարցերի համալիրի մշակումը։ Այդ բնագավառում աշխատանքներն իրականացվելու են երեք ուղղությամբ. ա) հետազոտության առարկա են դառնալու գիտատեխնիկական հեղափոխության փիլիսոփայական և սոցիոլոգիական այնպիսի պրոբլեմներ, ինչպիսիք են՝ ԳՏՀ-ի էությունը և բովանդակությունը, հասարակական պրակտիկա—գիտություն—արտադրություն համակարգի ձևավորումն ու պատմական զարգացման հեռանկարները, ԳՏՀ-ի և հասարակության զարգացման մեջ հոգևոր արտադրության դերի ու նշանակության որակական փոփոխությունները. բ) քննարկվելու են զարգացած սոցիալիստական հասարակությունում ԳՏՀ-ի սոցիալական հետևանքների հետ առընչություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ սոցիալական պրոցեսների վրա ԳՏՀ-ի ներգործության մեխանիզմը, ԳՏՀ-ն և հասարակական աշ-

խատանքի բնույթի ու բովանդակության փոփոխությունները, ԳՏՀ-ն և աղգային հարաբերությունները. գ) ԳՏՀ-ի գիտական պրոբլեմների հետազոտության համալիրը ինստիտուտում կլրացվի գիտատեխնիկական առաջընթացի իրավական տեսանկյունների հետազոտմամբ։ Վերջիններս կներառնեն արտադրության հետ գիտության ուղղակի կապերի իրավական կարգավորման և իրավական ձևավորման, ինչպես նաև բնության պաշտպանության և բնության ռացիոնալ օգտագործման իրավական պրոբլեմները։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում մի շարք տարիներ է, ինչ գործում է հատուկ մի բաժին, որը հատկապես զբաղվում է մշակույթի տեսության պրոբլեմների հետազոտմամբ։ Բաժինն իր առջև խնդիր է դրել 1980-ական թթ. հետազոտել մշակույթի տեսության տեղը հասարակական գիտությունների համակարգում, մշակույթի պատմական տիպաբանությունը, մշակութային ժառանգականության մեխանիզմները, էթնիկական մշակույթների ծագման և պատմական էվոլյուցիայի էկոլոգիական դետերմինանտները, սոցիալիստական մշակույթի օրինաչափություններն ու զարգացման տենդենցները։ Այդ ինստիտուտի կազմում գործում է մարքս-լենինյան գեղագիտության ինքնուրույն բաժինը, որի գոյությունը վկայում է գեղագիտության պրոբլեմների նկատմամբ մեր հանրապետությունում գոյություն ունեցող հատուկ հետաքրքրությունների մասին։ Այդ ասպարեզում առաջիկա տարիներին կհետազոտվեն իրականության հոգևոր յուրացման գեղագիտական և գիտական եղանակների յուրահատկության ու փոխներգործության պրոբլեմները, ինչպես նաև գեղագիտության գիտության հասկացական ապարատը։

Ինստիտուտի իրավագետները առաջիկայում իրենց ուժերը կկենտրոնացնեն տեսական-իրավական հետազոտությունների գործունեությունը ուժեղացնելու և հանրապետության օրենսդրական, վարչական ու իրավապաշտպանական մարմինների գործունեության կատարելագործման խնդիրներին դրանք ենթարկելու ուղղությամբ։

Բանասիրական գիտությունների զարգացումը մեր հանրապետությունում իր ավանդույթներն ունի։ Դրանց հետազոտությունները վերջին տարիներին նշանակալից են։ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը իրենց առջև դրել են մի շարք կարևոր խնդիրներ, որոնք պետք է լուծվեն ութսունական թվականներին։

Լեզվի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ զբաղվում են Հայկական ՍՍՀ տարածքում երկլեզվության և բազմալեզվության ուսումնասիրությամբ։ Այդ աշխատանքները կշարունակվեն առաջիկա տարիներին։ Կհետազոտվեն լեզվական ինտերֆերենցիայի, Երևան քաղաքի և հանրապետության մյուս խոշոր քաղաքների բնակչության խոսքի հանրալեզվաբանական բնութագրման աշխատանքները, կմշակվեն լեզվամիության հարցերը։ Մեր պայմաններում, երբ բնակչությունը մայրենի լեզվից բացի գործնականորեն օգտվում է նաև ռուսերենից, իսկ ոչ սակավ՝ նաև օտար լեզուներից, երբ հանրակրթական դպրոցներում դասավանդվում է հայերեն, ռուսերեն և որևէ օտար լեզու, երկլեզվության և բազմալեզվության հարցերը ստանում են կարևոր տեսական ու գործնական նշանակություն։ Ուստի մեր լեզվաբանների կողմից այդ պրոբլեմների գիտական հետազոտությունը կարևոր նշանակություն է ստանում։ Հետամուտ լինելով գիտական նոր ուղղությունների զարգացմանը, ՀՍՍՀ ԳԱ

նախագահությունը փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի առաջարկով լեզվի ինստիտուտում վերջերս ստեղծել է զուգադրական-տիպաբանական հետազոտությունների բաժին։ Վերջինիս կարևոր խնդիրն է լինելու հայերենի և ռուսերենի զուգադրական քերականության ստեղծումը։ Այդ քերականությունը ընդգրկելու է լեզվական բոլոր մակարդակները։ Տեսական աշխատանքին զուգընթաց զուգադրական-տիպաբանական բաժինը կզբաղվի ռուսաց և օտար լեզուներն ուսումնասիրողների գիտամեթոդական օգնության ուղղությամբ գործնական աշխատանքով։

Ժամանակակից գրական հայերենի գործառական ոճերի, գեղարվեստական գրականության լեզվի ուսումնասիրությունը առաջիկա տարիներին կընհանգեցնի ոճաբանության տեսական դասընթացի և գործնական ոճաբանության ուսումնական ձեռնարկի ստեղծմանը։ Դրա հետ միասին լեզվի ինստիտուտի աշխատակիցները կշարունակեն հին, միջնադարյան և նոր հայ գրականության առանձին երկերի լեզվի և ոճի հետազոտության աշխատանքները։ Հայոց լեզվի բազմակողմանի ուսումնասիրությունը պահանջում է հետևողականորեն շարունակել ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի տարբեր կողմերի խոր ուսումնասիրությունը։ Այդ հանգամանքը նկատի ունենալով լեզվի ինստիտուտը առաջիկայում հատուկ ուշադրություն կդարձնի այնպիսի հարցերի հետազոտությանը, ինչպիսիք են բայի արժույթականությունը և խնդրառությունը տարբեր խոսքի մասերի համակարգում, ժամանակակից հայերենի բառային իմաստաբանությունը, իմաստային դաշտերի բնույթը և ուրիշներ։ Նման և մի շարք այլ հարցերի հետազոտությունը մեր լեզվաբանները կիրականացնեն պատմահամեմատական ուսումնասիրությունների ձևով։ Ինստիտուտում կշարունակվեն հայոց լեզվի տարբեր իմաստային խմբերի և առանձին հնդեվրոպական լեզվախմբերի հետ (հունական, սլավոնական և այլն) հայերենի իմաստաբանական կապերի ուսումնասիրությունը։

Մեր լեզվաբանները արդեն մի շարք տարիներ զբաղվում են հայոց լեզվի բարբառագիտական ատլասի կազմման աշխատանքներով։ Այդ աշխատանքները կշարունակվեն նաև 1980-ական թթ., իսկ տասնմեկերորդ հնգամյակում կավարտվի նյութերի հավաքումը Հայկական ՍՍՀ տարածքում։ Դրան զուգընթաց բարբառագետները կշարունակեն իրենց ուսումնասիրությունները պատմական բարբառագիտության, ինչպես նաև առանձին չուսումնասիրված բարբառների մենագրական գիտական նկարագրություններ ստեղծելու ուղղությամբ։

Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ութսունական թվականներին կսկսվեն հայոց լեզվի պատմական և ստուգաբանական բառարաններ կազմելու աշխատանքը։ Միևնույն ժամանակ կշարունակվեն միջին հայերենի բառարանի և առանձին հին և միջնադարյան հեղինակների երկերի համաբարբառների ստեղծման աշխատանքները։ Ժամանակակից հայերենի տերմինաբանության, խոսքի մշակույթի, ուղղագրության և ուղղախոսության հարցերը հրատապ են և դրանք այդպիսին կմնան մեր լեզվաբանների համար նաև առաջիկա տարիներին։ Նախատեսվում է շարունակել գիտության առանձին բնագավառների տերմինաբանության զարգացման պատմության ուսումնասիրությունը։ Ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ կշարունակեն էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգնությամբ բնական լեզվի բառերի ավ-

տոմատ ճանաչման համար սարքերի ստեղծման աշխատանքները։ Ենթադրվում է, որ արդյունքը կնպաստի մարդու և մեքենայի անմիջական հաղորդակցման պրոբլեմի լուծմանը։

Լեզվի ինստիտուտի մի շարք հետազոտությունների հիման վրա 1980-ական թթ. ընթացքում կստեղծվի «Հայոց լեզվի պատմություն» քառահատոր աշխատությունը։ Ծրագրված է տասնմեկերորդ հնգամյակում ավարտել առաջին հատորը և 2—4-րդ հատորների հիմնական բաժինները։ Այդ հատորները համապատասխանաբար նվիրված կլինեն հայոց լեզվի հին, միջին և նոր շրջանների զարգացման պատմությանը։

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ծրագրի համաձայն, ուսումնական թվականներին գրականագիտական աշխատանքներն ընթանալու են՝ ելնելով, մի կողմից, համեմատաբար քիչ լուսաբանված կամ մոռացության տրված պրոբլեմների քննության խնդրից և, մյուս կողմից, ժամանակակից գիտության առաջադրած նոր պահանջներին պատասխանելու անհրաժեշտությունից։ Ինստիտուտի աշխատակիցները կկազմեն և կհրատարակեն Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Սայաթ-Նովայի, ճարտասանական արվեստի հուշարձանների քննական բնագրերը։ Կհրատարակվի նաև «Շուշանիկի վարքը» գրական հուշարձանը՝ ընդարձակ և համառոտ խմբագրություններով։ Ինստիտուտում զգալի աշխատանք կծավալվի միջնադարյան գրականության տեսական ուսումնասիրության ուղղությամբ։ Գիտական քննության նյութ կդառնան պատմական արձակի, առակագրության, ճարտասանական գրականության, վարքերի և վկայաբանությունների, ուղեգրության և օրագրության, հոգևոր և աշխարհիկ քնարերգության և ուրիշ ժանրերի պատմական զարգացման և տեսության հարցերը։ Այդ հետազոտությունների հիման վրա և նրանց զուգընթաց կստեղծվի «Հայ հին և միջնադարյան գրականության ժանրերը» կոլեկտիվ աշխատությունը։ Նախատեսված է հետազոտություններ կատարել նաև հայ միջնադարյան գրականության մեջ մարդու կերպարի բացահայտման յուրահատկությունների վերաբերյալ։ Ինստիտուտում կշարունակվեն աշխատանքները հայ միջնադարյան գեղագիտական մտքի զարգացումն արտացոլող ժողովածուի վրա, որը կունենա հետազոտական ծավալուն ուսումնասիրություն և մանրամասն ծանոթագրություններ։

Ինչպես արդեն նշվեց, գրականության ինստիտուտը հաջողությամբ ավարտել է «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը։ Սակայն այդ ամենևին էլ չի նշանակում հետազոտական աշխատանքների թուլացում այդ բնագավառում։ 1980-ական թթ. կգրվեն ու կհրատարակվեն նոր մենագրական աշխատություններ Նար-Դոսի, Ծերենցի, Վահան Տեր-յանի և ուրիշների մասին։ Ինստիտուտի աշխատակիցների ուժերով կավարտվի և կհրատարակվի «Հայ քննադատական մտքի պատմությունը» երկու հատորով, որն ընդգրկում է XIX դարը և XX դարի սկիզբը։ Առանձին մենագրություն կնվիրվի դարասկզբի հայ մարքսիստական քննադատության պատմությանը։

Հայ նոր գրականության ուսումնասիրության ուղղությամբ կատարված մեծ և բազմազան աշխատանքի հիման վրա 80-ական թվականներին գրականագետները կդիմեն առանձին ժանրերի պատմության հետազոտությանը, որոնցից առաջինը կլինի հայ վեպի պատմությունը։ Մեթոդաբանական հիմքեր են ստեղծվել նաև գրական ուղղությունների և հոսանքների ուսումնասիրության համար։ Կսկսվի հայ նոր գրականության մեջ ռեալիստական մեթոդի ա-

առաջացման և զարգացման պատմության, նրա հիմնական փուլերի և տեսակների տիպաբանական քննությունը։

Կհրատարակվի մենագրական ուսումնասիրություն ժողովրդական բանահյուսության հետ հայ դասական գրողների բազմազան առնչությունների մասին։ Կհրատարակվի «Հայ նոր գրականության ժամանակագրության» երկրորդ հատորը (1851—1875 թթ.)։ Մեծ աշխատանքներ են նախատեսվում հայ նոր և նորագույն շրջանի դասական գրողների երկերի գիտական հրատարակության ուղղությամբ։ Կավարտվեն Մ. Նալբանդյանի, Դ. Դեմիրճյանի, Ա. Բակունցի երկերի հրատարակությունները, կպատրաստվեն Թումանյանի, Աղայանի, Ռաֆֆու, Վարուժանի, Սիամանթոյի, Մ. Պեշիկթաշլյանի և ուրիշ դասականների երկերի ժողովածուները։ Կշարունակվի «Դասականները գրականության մասին» մատենաշարը (Ա. Արփիարյան, Գր. Արծրունի, Լեո և ուրիշներ)։ Նախատեսվում է հրատարակել Հ. Թումանյանի և Ե. Չարենցի կյանքի և ստեղծագործության տարեգրությունները։

Սովետահայ գրականության հետազոտության բնագավառում կարևորագույն խնդիրը լինելու է սովետահայ գրականության պատմության նոր հետազոտությունը երկու-երեք հատորով։ Այդ աշխատության առանցքը լինելու է այն հարցը, թե ինչպես է առաջացել, ձևավորվել և զարգացել սոցիալիստական ռեալիզմի մեթոդը հայ գրականության մեջ։ Նախատեսվում է ստեղծել այնպիսի կոլեկտիվ աշխատություններ, ինչպիսիք են «Կոմունիստական կուսակցության քաղաքականությունը գեղարվեստական գրականության մարզում», «Ժամանակակից արձակի հարցեր» ժողովածուները և այլն։ Կարևորագույն աշխատանքներից մեկը այս ուղղությամբ լինելու է «Սովետահայ պոեզիայի պատմություն» կոլեկտիվ աշխատությունը, որը կառուցվելու է ըստ պատմական փուլերի և ստեղծագործական հիմնական պրոբլեմների։ Մենագրական նոր աշխատություններ կստեղծվեն սովետահայ գրականության ականավոր հեղինակների մասին (Չարենց, Զորյան, Մահարի, Զարյան, Սևակ, Քոչար, Շիրազ և ուրիշներ)։

Ինստիտուտում կարևոր տեղ է հատկացվում սփյուռքահայ գրականության հետազոտությանը։ Նախատեսվում է շարունակել և ավարտել այդ գրականության պատմության ստեղծումը՝ դարասկզբից մինչև մեր օրերը։ Կհրատարակվեն նաև աշխատություններ՝ նվիրված առանձին հայ գաղութների գրականության զարգացմանը (Ֆրանսիա, Սիրիա, Լիբանան)։ Մենագրական աշխատություններ կնվիրվեն սփյուռքի նշանավոր գրողների ստեղծագործությանը։ Կշարունակվի սփյուռքահայ գրականության մատենագիտության կազմումը։

Գրականության ինստիտուտի տեսության բաժնում ծրագրվում է ստեղծել այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են՝ «Հայ դասական պատմավեպի պոետիկան», «Ոճային ուղղությունների զարգացման օրինաչափությունները», «Սյուժեն և ժանրը» և այլն։ Տեսական այս և ուրիշ աշխատությունների մեջ որոշակի տեղ կգրավի գրականագիտական հետազոտության նոր մեթոդների փորձը, այն չափով, ինչքանով նրանք նպաստում են գեղարվեստական երկի բարդ կառուցվածքի բացահայտմանը։

Այլ ժողովուրդների գրականությունների հետ հայ գրականության առընչությունների ուսումնասիրությունը կբարձրացվի նոր մակարդակի՝ ինչպես

հետազոտվող նյութի ընդլայնման, այնպես էլ ուսումնասիրման նոր մեթոդների կիրառման իմաստով։ Մեծ ուշադրություն կդարձվի տիպաբանական կապերի և առնչությունների, այսինքն՝ պատմական և դեղագիտական հանգամանքներով պայմանավորված օբյեկտիվ ընդհանրությունների բացահայտմանը։ Մյուս նորությունը կլինի սովետական ժողովուրդների գրականության ներքին կապերի ուսումնասիրությունը, որը մինչև այժմ բավարար ուշադրության չի արժանացել։ Կսկսվի հայ-ռուսական, հայ-արևմտաեվրոպական գրական առնչությունների ամբողջական պատմության ստեղծումը։ Գրական կապերին վերաբերող նյութերի մատենագիտությունը՝ քաղված հարյուրավոր հայ պարբերականների էջերից, կավարտվի և կհրատարակվի։ Կհրատարակվեն «Հայագիտությունը Ռուսաստանում» մենագրական աշխատությունը, ինչպես նաև առանձին ուսումնասիրություններ արևմտաեվրոպական հայագիտության մասին։

Հնգամյակի վերջում կսկսվի հայ գրականության պատմության 10-հատորյակի նախապատրաստությունը։ Դա կլինի հայ հին, նոր և սովետական գրականության պատմության ընդհանրացումը և որակական նոր աստիճանը։ Հայ գրականության պատմության բազմահատորյակը ոչ միայն պետք է ներկայացնի բազմադարյան գեղարվեստական մշակույթի գլխավոր արժեքները, այլև պետք է ստեղծի առարկայի պատմության միասնական համակարգ՝ այն դիտելով իբրև ամբողջական պրոցես։ Մյուս ընդհանրացնող աշխատությունը կլինի հայ գրականության ամբողջական պատմության ռուսերեն հրատարակությունը՝ երեք հատորով։ Այդ աշխատանքը կկատարվի բազմահատորյակի ստեղծմանը զուգընթաց։

1980-ական թթ. կազմվելու և հրատարակվելու է «Հայկական ՍՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների համահավաք» բազմահատորյակը։ «Համահավաքի» կազմման հիմնական պարտականությունները դրված են ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի վրա։ Այդ նպատակով ինստիտուտում ստեղծված է հատուկ բաժին։ «Համահավաքի» կազմմանը մասնակցում են նաև մեր ակադեմիայի պատմության, գրականության, հնագիտության և ազգագրության ինստիտուտները, կուլտուրայի մինիստրությունը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից հուշարձանների պահպանման և օգտագործման վարչությունը։

Արվեստի ինստիտուտը 1980-ական թթ. կավարտի և կհրատարակի՝ «Հայ ճարտարապետության պատմություն»՝ 6 հատորով, «Հայ երաժշտության պատմություն»՝ 4 հատորով, «Հայ կերպարվեստի պատմություն»՝ 3 հատորով, «Հայ թատրոնի պատմություն»՝ 3 հատորով։ Կավարտվի նաև Կոմիտասի երկերի 13 հատորների հրատարակությունը, որոնցից 5-ն արդեն ընթերցողի սեղանին են։ Նշված ժամանակահատվածում արվեստի ինստիտուտը կհրատարակի նաև «Նյութեր հայ արվեստի պատմության», «Հայկական արվեստ», «Կոմիտասական», «Շեքսպիրական», «Կինոյի և հեռուստատեսության խնդիրներ» մատենաշարերի հերթական թեմատիկ ժողովածուները։

Վերջին մի շարք տարիների ընթացքում արվեստի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ կազմում են հայկական ժողովրդական երաժշտության նմուշների վերաբերյալ փորձնական անալիտիկ քարտեր։ Այդ քարտերն ամփոփում են երաժշտական ստեղծագործության ձևաբանական վերլուծության անհրաժեշտ բոլոր հիմնական պահանջները։ Աշխատանքները կատարվում են ՀՍՍՀ ԳԱ և Երևանի պետական համալսարանի հաշվողական կենտրոնի հետ

համատեղ։ 1980-ական թթ. այդ աշխատանքները կշարունակվեն։ Ծրագրվում է նաև նման անալիտիկ քարտերի կազմման սկզբունքներ մշակել ճարտարապետության և կերպարվեստի գործերի հետազոտման համար։

Կարևոր և ուրույն դեր ունեն կատարելու փիլիսոփայության և օտար լեզուների ամբիոնները։ Փիլիսոփայության ամբիոնի առաջնահերթ խնդիրն է դասախոսությունների, սեմինար պարապմունքների ու կոնսուլտացիաների կազմակերպումն ու անցկացումը ՀՍՍՀ ԳԱ ինստիտուտների ու այլ հիմնարկների այն ասպիրանտների, հայցվորների ու գիտաշխատողների համար, ովքեր պատրաստվում են թեկնածուական մինիմումի քննություն հանձնել դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմից։ Ոչ պակաս կարևոր խնդիր է դրվել ամբիոնի առջև գիտական գործունեության բնագավառում՝ փիլիսոփայության հրատապ պրոբլեմների (ուսումնական պրոցեսին սերտորեն առնչվող) դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի ասպարեզում գիտահետազոտական աշխատանքների կատարումը։ Այդ երկու խնդիրներն էլ իրագործելիս փիլիսոփայության ամբիոնը կոչված է մարքս-լենինյան աշխարհայացքի ոգով գաղափարական-դաստիարակչական աշխատանքներ ծավալել ասպիրանտների, հայցվորների ու երիտասարդ գիտաշխատողների շրջաններում։

Նմանատիպ խնդիրներ է դրվել օտար լեզուների ամբիոնի առջև, որը մեր ակադեմիայի հիմնարկների ասպիրանտներին ու աշխատակիցներին օտար լեզուներ է ուսուցանում՝ թեկնածուական մինիմումի քննությունները հանձնելու, ինչպես նաև գիտական ու ծառայական գործունեության հետ կապված այլևայլ նպատակներով։ Այժմ խնդիրն այն է, որ փիլիսոփայության և օտար լեզուների ամբիոնները, ելակետ ունենալով ՍՄԿԿ XXVI համագումարի պատմական որոշումները, լիովին և բարձր մակարդակով կատարեն իրենց առջև դրված պարտավորությունները։

Վերջին տարիներին արմատական բեկում է կատարվել փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքին կից կոորդինացիոն խորհուրդների գործունեության մեջ։ Փիլիսոփայության կոորդինացիոն գիտական խորհուրդը (նախագահ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Ս. Թովմասյան) մի շարք անգամ քննարկել է հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների գիտահետազոտական պլանները, կոնկրետ հանձնարարականներ է մշակել տեղ գտած թերությունները, մասնավորապես զուգադիպությունները և մանրաթեմայնությունը վերացնելու նպատակով։ Նույն խնդիրները վերջին տարիներին իրագործել են նաև լեզվի, գրականության, իրավաբանության, արվեստի կոորդինացիոն գիտական խորհուրդները, որոնց նախագահներն են համապատասխանաբար՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Զահուկյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է. Մ. Ջրբաշյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Զ. Բեգյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռ. Վ. Զարյանը։ Խորհուրդները զգալի գործ են կատարել հանրապետության գիտնականների ուժերով կարևոր, կոմպլեքսային հետազոտությունները համատեղ իրականացնելու ուղղությամբ։ Այժմ խնդիրն այն է, որ մեր կոորդինացիոն գիտական խորհուրդները չսահմանափակվեն կատարած աշխատանքի բնույթով (նաև ծավալով) ու հատուկ ուշադրություն դարձնեն խորհուրդների պլանավորման ֆունկցիայի վրա, հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների

և բուհերի համար մշակեն գիտության համապատասխան ճյուղերի զարգացման հեռանկարային ծրագրեր։ Այդ, ինչպես նաև իրենց առջև դրված մյուս խնդիրները կոորդինացիոն խորհուրդները կկարողանան ըստ էության իրականացնել այն դեպքում, եթե խորհուրդների հանձնարարականները պարտադիր դառնան համապատասխան հիմնարկների համար։

Զգալի գործունեություն են ծավալել ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության և ՍՍՀՄ հոգեբանական ընկերության հայկական բաժանմունքները։ ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության հայկական բաժանմունքի բազմակողմանի գործունեությունից նշենք տարեկան գիտական նստաշրջանները, որոնք արդեն տեղի են ունեցել վերջին չորս տարիներին՝ անընդմեջ։ Այդ նստաշրջաններին գիտական հրատապ տարբեր պրոբլեմների շուրջ զեկուցումներով հանդես են գալիս մեր հանրապետության փիլիսոփաները։ Գոհունակությամբ պետք է արձանագրել այն փաստը, որ փիլիսոփայական ընկերության տարեկան նստաշրջաններին երկու անգամ զեկուցումով հանդես է եկել ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության վարչության անդամ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Վերջին տարիներին իր աշխատանքները աշխուժացրել է հոգեբանության ընկերության հայկական բաժանմունքը (նախագահ՝ հոգեբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Հակոբյան), որի մասին է վկայում մասնավորապես 1980 թ. Երևանում անցկացված անդրկովկասյան հոգեբանների 8-րդ կոնֆերանսը։ Այդ ընկերությունները, ելնելով Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարի և Հայաստանի ԿԿ XXVII համագումարի որոշումներից, աշխատանքային բովանդակալից ծրագրեր են մշակել, որոնք պետք է իրագործվեն 1980-ական թթ.։

Բաժանմունքի բյուրոն իր գործունեության ընթացքում ձգտում է ապահովել բաժանմունքի հիմնարկների կողմից կատարվող գիտական հետազոտությունների տեսական բարձր մակարդակը և այդ հետազոտությունների կապը կյանքի, սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ։ Հասարակական գիտությունների բնագավառում այդ կապի արտահայտություններից է դասախոսական աշխատանքը աշխատավորների լայն շրջանում, Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI և Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարների պատմական որոշումների մասսայականացումը։ Բաժանմունքը ծրագրել է մի շարք միջոցառումներ, որոնց մի մասն արդեն իրականացված կլինի, երբ ամսագրի այս համարի ընթերցողները ծանոթանան նշված միջոցառումներին։ Դրանք են՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության 26 կոմիսարների շրջկոմի և ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի հետ համատեղ «Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարը և մարքս-լենինյան տեսության հարցերը» թեմայով գիտական կոնֆերանսը, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտագործնական կոնֆերանսները՝ «ՍՄԿԿ XXVI համագումարը զարգացած սոցիալիզմի հասարակության սոցիալ-տընտեսական առաջընթացի հրատապ պրոբլեմների մասին» (ՀԿԿ Սպանդարյանի շրջկոմի հետ համատեղ) և «ՍՄԿԿ XXVI համագումարը սոցիալիստական հասարակության զարգացման մեջ բանվոր դասակարգի աճող դերի մասին» (ՀԿԿ Լենինյան շրջկոմի հետ համատեղ) թեմաներով, «XXVI համագումարը և սոցիալիստական ապրելակերպը» թեմայով գիտական կոնֆերանսը՝ Վրացա-

կան ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիաների փիլիսոփայության ինստիտուտների հետ համատեղ։

Կոնկրետ միջոցառումներ են մշակված տեսական ու գիտակազմակերպական բարձր մակարդակով իրականացնելու գրականության ինստիտուտի կողմից ծրագրված «Ժամանակակից հայ վեպի զարգացման միտումները» և «Հայկական ռեալիզմի տեսության ու պատմության հարցերը» թեմաներով գիտական կոնֆերանսները, լեզվի ինստիտուտին կից մշտական գործող սեմինարներում անցկացվող ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերի ուսումնասիրությունը, ժամանակակից լեզվաբանության կարևորագույն տեսական խնդիրների քննարկումն ու արտասահմանյան լեզվաբանության իդեալիստական ուղղությունների քննադատությունը, դրականության տեսության, ժամանակակից գրական ուղղությունների, զարգացած սոցիալիզմի դարաշրջանի արվեստի, ազգային մշակույթների ծաղկման ու փոխհարստացման հարցերին նվիրված նստաշրջանները։ Ծրագրված են նաև նման կարգի մի շարք այլ միջոցառումներ։ Այս ամենը, հիրավի, նշանակալից միջոցառումներ կլինեն մեր կուսակցության որոշումները գիտության ու գաղափարական աշխատանքներում կենսագործելու ուղղությամբ։